ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ II ԾՐԱԳԻՐ

ՄՋԸ ՎԱՐԿ No. 5398-AM

ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ՝ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ
ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ
Հունիս 2020

Հեռ.՝ +37460 528899
Էլ.փոստ՝ bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

ՀՀ, ք. Երևան
Գ. Անհայդի 23/6, 5-րդ
հարկ. տարածք 7

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել 2014թ. մայիսի 23-ին կնքված ՄՋԸ 5398-ԱՄ Վարկային Համաձայնագրով (Վարկային Համաձայնագիր) ֆինանսավորվող և ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (ԱՍՀՆ) կողմից իրականացվող "Սոցիալական պաշտպանության վարչարարության II Ծրագրի" (Ծրագիր) հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2019թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա դրամական միջոցների ստացումների և ծախսումների մասին հաշվետվությունը, ըստ բաղադրիչների ֆոնդերի օգտագործման մասին հաշվետվությունը, ինչպես նաև հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփը և այլ ծանոթագրությունները:

Մեր կարծիքով, Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ծրագրի 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա դրամական միջոցների ստացումները և վճարումները՝ համաձայն "Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամային սկզբունքով" Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտի (ՀՀՀՀՄՍ-դրամային սկզբունք):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է սույն հաշվետվության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» պարբերությունում:
Մենք անկախ ենք Ծրագրից և ԱՍՀՆ-ից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՍԽ կանոնների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքի շեշտադրում – Դրամային միջոցների սկզբունքով հաշվետվությունների պատրաստում

Առանց ձևափոխելու մեր կարծիքը, Ձեր ուշադրությունն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվություններին կից ծնթ. 2-ին, որտեղ ներկայացված է, որ այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են դրամային միջոցների սկզբունքով, որի պատճառով, այս հաշվետվությունները կարող են չհամապատասխանել այլ նպատակներով օգտագործման համար:

Հանգամանքի շեշտադրում –Ծրագրի իրականացում

Առանց ձևափոխելու մեր կարծիքը, Ձեր ուշադրությունն ենք հրավիրում ծնթ. 7.2-ին, որտեղ ներկայացված է Ծրագրի իրականացման դանդաղ ընթացքի հանգամանքները:

Հանգամանքի շեշտադրում –Ծրագիրը իրականացնող կառույցի փոփոխություն

Առանց ձևափոխելու մեր կարծիքը, Ձեր ուշադրությունն ենք հրավիրում 1.4-ին, որտեղ ներկայացված է Ծրագիրը իրականացնող կառույցի փոփոխությունը 01.01.2020թ-ից:

Հանգամանքի շեշտադրում – Հետագա դեպքեր

Առանց ձևափոխելու մեր կարծիքը, Ձեր ուշադրությունն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվությունների ծնթ. 9.2-ի վրա, որը նկարագրում է հաշվետու ամսաթվից հետո COVID-19 համավարակի հնարավոր ազդեցությունը Ծրագրի վրա:

ԲԻԴԻՕ Արմենիա ՍՊԸ-ն հանդիսանում է բրիտանական ԲԻԴԻՕ Ինթերնեյշնլ Լիմիթեդ ընկերության անդամ և ԲԻԴԻՕ անվանի ընկերությունների միջազգային ցանցի անդամ:

Հեռ.՝ +37460 528899
էլ.փոստ՝ bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

ՀՀ, ք. Երևան
Գ. Մնհադրի 23/6, 5-րդ
հարկ, տարածք 7

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

ԱՍՀՆ-ն պատասխանատու է Հաշվապահների Միջազգային Դաշնության (ՀՄԴ) Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՀՀՄՄԽ) կողմից հրապարակված "ՀՀՀՀՄՄ-դրամային սկզբունք" ստանդարտի և Համաշխարհային Բանկի կողմից ֆինանսավորվող ներդրումային գործառնությունների Ֆինանսական Զեռնարկի (ՀԲ ուղեցույց) համաձայն հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար և այնպիսի ներքին հսկողության համար, որը, ղեկավարության կարծիքով, անհրաժեշտ է՝ խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած լինելու հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի հաշվետվություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացրած աուդիտը միշտ կհայտնաբերի բոլոր էական խեղաթյուրումները, երբ նրանք առկա են: Խեղաթյուրումները կտրող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք՝ առանձին կամ միասին վերցրած, կազդեն հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություններ և պահպանում մասնագիտական կասկածամտություն:

Ի լրումն՝

- հստակորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ՝ Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների և դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Բի-Դի-Օ Արմենիա ՍՊԸ-ն հանդիսանում է բրիտանական Բի-Դի-Օ Ինթերնեյշնլ Լիմիթեդ ընկերության անդամ և Բի-Դի-Օ անկախ ընկերությունների միջազգային ցանցի անդամ:

Հեռ.՝ +37460 528899
էլ.փոստ՝ bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

ՀՀ, ք. Երևան
Դ. Անանդի 23/6, 5-րդ
հարկ, տարածք 7

Մենք, ի թիվս այլ հարցերի, ղեկավարությանը տեղեկացնում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Եզրակացություն իրավական այլ պահանջներին համապատասխանելու վերաբերյալ

Վարկային Համաձայնագրի պահանջների պահպանման նպատակով, Ծրագրի ղեկավարությունը պետք է ապահովի, որ.

1. Ֆոնդերն օգտագործվել են Հայաստանի Հանրապետության և Միջազգային Զարգացման Ընկերակցության (ՄԶԸ) միջև կնքված Վարկային Համաձայնագրում նշված պայմաններին և Համաշխարհային Բանկի համապատասխան ուղեցույցներին համապատասխան՝ պատշաճ ուշադրություն դարձնելով տնտեսմանը և արդյունավետությանը, և միայն այն նպատակներով, որոնց համար հատկացվել են:
2. Ծախսերը ապահովված են համապատասխան հիմնավորող փաստաթղթերով, գրանցումներով և հաշիվներով: Փոխհատուցման դիմումներում ներառված և փոխհատուցված ծախսերը ընդունելի են ֆինանսավորման համար՝ համաձայն Վարկային Համաձայնագրի: Ծրագրի ղեկավարության կողմից հաշվետու տարվա վերաբերյալ ներկայացված Միջանկյալ Ֆինանսական Հաշվետվությունները համապատասխանում են հաշվապահական գրանցումներին:
3. Նպատակային հաշիվը վարվել է համաձայն Վարկային Համաձայնագրի պայմանների և Համաշխարհային Բանկի համապատասխան ուղեցույցների:
4. Ֆինանսավորվող աշխատանքները, ապրանքները և ծառայությունները ձեռք են բերվել համաձայն Վարկային համաձայնագրի պայմանների և Համաշխարհային Բանկի համապատասխան ուղեցույցների:

Մեր կարծիքով, 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում Ծրագրի ղեկավարությունը պահպանել է նշված պահանջները:

"Բի-Դի-Օ Արմենիա" ՓԲԸ
10 հունիսի, 2020թ.

Վահագն Սահակյան, FCCA
Տնօրեն

Գնել Խաչատրյան, FCCA
Աուդիտոր

Բի-Դի-Օ Արմենիա ՓԲԸ-ն հանդիսանում է բրիտանական Բի-Դի-Օ Ինթերնեյշնլ Լիմիթեդ ընկերության անդամ և Բի-Դի-Օ անկախ ընկերությունների միջազգային ցանցի անդամ:

Դրամական միջոցների ստացումների և ծախսումների մասին հաշվետվություն
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ
(ԱՄՆ դոլար)

		Փաստացի		Նախատեսված		Շեղում		ԾԳՓ
		31.12.2019 ավարտված տարի	Աճողական առ 31.12.2019	31.12.2019 ավարտված տարի	Աճողական առ 31.12.2019	31.12.2019 ավարտված տարի	Աճողական առ 31.12.2019	
Դրամական միջոցների սկզբնական մնացորդ								
Նպատակային հաշիվ (ՄԶԸ վարկ 5398-AM)		510,145.99	-					
Ծրագրի հաշիվ (ՀՀ Կառավարություն)		-	-					
Ընդամենը		510,145.99	-					
Ֆոնդերի աղբյուրներ								
ՄԶԸ վարկ 5398-AM	8.1	2,071,948.32	7,909,886.78					
ՀՀ Կառավարության համաֆինանսավորում	8.2	257,912.26	1,376,179.70					
Ընդամենը		2,329,860.58	9,286,066.48					
Արտարժութային օգուտ/(կորուստ)		836.08	2,068.68					
Ֆոնդերի օգտագործում	7							
1. Ծրագրի շրջանակում ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, վերապատրաստում և լրացուցիչ գործառնական ծախսեր՝ բացառությամբ Ծրագրի բաղադրիչ II.2-ի միջոցառումների		1,452,891.12	7,900,183.63	3,788,511.00	10,235,803.51	(2,335,619.88)	(2,335,619.88)	24,500,000.00
2. Ծրագրի բաղադրիչ II.2-ի շրջանակում կանխիկ դրամաշնորհներ և խորհրդատվական ծառայություններ		-	-					2,000,000.00
Ընդամենը ծրագրային ծախսեր		1,452,891.12	7,900,183.63	3,788,511.00	10,235,803.51	(2,335,619.88)	(2,335,619.88)	26,500,000.00
Դրամական միջոցների վերջնական մնացորդ	6							
Նպատակային հաշիվ (ՄԶԸ վարկ 5398-AM)		1,387,951.53	1,387,951.53					
Ծրագրի հաշիվ (ՀՀ Կառավարություն)		-	-					
Ընդամենը		1,387,951.53	1,387,951.53					

Ստեփան Մաչյան
ՀՀ ԱՍՀՆ գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող
10 հունիսի, 2020թ.

Ռիմմա Բաբոյան
Ֆինանսական կառավարման մասնագետ

Ծանոթագրությունների 8-15 էջերը կազմում են այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Ըստ բաղադրիչների ֆոնդերի օգտագործման մասին հաշվետվություն
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ
(ԱՄՆ դոլար)

	Փաստացի		Նախատեսված		Շեղում		ԾԳՓ
	31.12.2019 ավարտված տարի	Աճողական առ 31.12.2019	31.12.2019 ավարտված տարի	Աճողական առ 31.12.2019	31.12.2019 ավարտված տարի	Աճողական առ 31.12.2019	
Բաղադրիչ I: Համալիր սոցիալական պաշտպանության ծառայությունների տրամադրման ընդլայնում	1,113,050.57	5,559,909.35	3,035,147.30	7,482,006.08	(1,922,096.73)	(1,922,096.73)	17,205,500.00
Բաղադրիչ II: Աջակցություն ստացողի զբաղվածության նոր ռազմավարության իրականացմանը	-	-	246,286.90	246,286.90	(246,286.90)	(246,286.90)	2,823,000.00
Բաղադրիչ III: Կենսաթոշակային համակարգի արդիականացում	-	41,799.65	62,349.00	104,148.65	(62,349.00)	(62,349.00)	1,066,000.00
Բաղադրիչ IV: ԱՍՀՆ վերլուծական կարողությունների և մշտադիտարկման ու գնահատման համակարգերի հզորացում	82,774.90	405,641.75	124,388.50	447,255.35	(41,613.60)	(41,613.60)	1,472,000.00
Բաղադրիչ I-IV:	-	590,730.19	-	590,730.19			-
Բաղադրիչ V: Ծրագրի կառավարում	257,065.65	1,302,102.69	320,339.30	1,365,376.34	(63,273.65)	(63,273.65)	1,690,300.00
Չտեղաբաշխված ֆոնդեր	-	-	-	-	-	-	2,243,200.00
Ընդամենը ծրագրային ծախսեր	**1,452,891.12**	**7,900,183.63**	**3,788,511.00**	**10,235,803.51**	**(2,335,619.88)**	**(2,335,619.88)**	**26,500,000.00**

Ստեփան Մաչյան
ՀՀ ԱՍՀՆ գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող

10 հունիսի, 2020թ.

Ռիմմա Բաբայան
Ֆինանսական կառավարման մասնագետ

Ծանոթագրությունների 8-15 էջերը կազմում են այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Ընդհանուր տեղեկություններ

1.1. Ծրագիր

2014թ. մայիսի 23-ին Հայաստանի Հանրապետության և Միջազգային Զարգացման Ընկերակցության (ՄԶԸ) միջև ստորագրվել է Ֆինանսավորման համաձայնագիր, համաձայն որի ՄԶԸ-ն Հայաստանի Հանրապետությանն է տրամադրել No. 5398-AM վարկը՝ 13,900,000 Հատուկ Փոխարկման Իրավունք (SDR) գումարով:
Վարկային համաձայնագիրը ուժի մեջ է մտել 2014թ. հոկտեմբերի 29-ին:

Վարկի տրամադրման արժույթը ԱՄՆ դոլարն է (USD).

Վարկը տրամադրվել է «Սոցիալական պաշտպանության վարչարարության II ծրագրի» (Ծրագիր) իրականացման համար:

Ֆինանսավորման համաձայնագրով Ծրագրի ավարտման վերջնաժամկետ է սահմանվել 2018թ. դեկտեմբերի 31-ը: 2018թ. Ծրագրի ավարտման ժամկետը երկարաձգվել է մինչև 2020թ. նոյեմբերի 30-ը: 2020թ. ապրիլի 21-ին ֆինանսավորման համաձայնագրի փոփոխության համաձայն Ծրագրի ավարտման ժամկետը երկարաձգվել է մինչև 2022թ. հոկտեմբերի 31-ը: Փոխհատուցման դիմումների ներկայացման արտոնյալ ժամանակաշրջանը Ծրագրի ավարտից հետո չորս ամիս է:

1.2. Ծրագրի նպատակը

Ծրագրի նպատակներն են. բարելավել սոցիալական պաշտպանության ծառայությունների տրամադրումը և հզորացնել սոցիալական պաշտպանության նպաստներ վճարող և ծառայություններ տրամադրող մարմինների վերլուծական, մշտադիտարկման և գնահատման գործառույթները:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

Մաս I. Համալիր սոցիալական պաշտպանության ծառայությունների տրամադրման ընդլայնում,
Մաս II. Աջակցություն ստացողի զբաղվածության նոր ռազմավարության իրականացմանը,
Մաս III. Կենսաթոշակային համակարգի արդիականացում,
Մաս IV. ԱՍՀՆ վերլուծական կարողությունների և մշտադիտարկման ու գնահատման համակարգերի հզորացում,
Մաս V. Ծրագրի կառավարում:

1.3. Ծրագրի բյուջե և ֆինանսավորում

Ծրագիրը ֆինանսավորվում է հետևյալ աղբյուրներից.

- ՄԶԸ No. 5398-AM վարկ - 100% առանց հարկերի,
- Հայաստանի Հանրապետության Կառավարություն (ՀՀ Կառավարություն)– հարկեր:

Կատեգորիա	ՄԶԸ վարկ 5398-AM				ՀՀ Կառավարություն	Ընդամենը
	SDR Սկզբնական	SDR (փոփոխված*)	USD համարժեք (նախնական)	USD համարժեք (թարմացված**)	USD համարժեք (թարմացված)	USD համարժեք
1. Ծրագրի շրջանակում ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, վերապատրաստում և լրացուցիչ գործառնական ծախսեր՝ բացառությամբ Ծրագրի բաղադրիչ II.2-ի միջոցառումների	12,800,000	13,900,000	21,200,000	19,282,365	4,929,124	24,211,489
2. Ծրագրի բաղադրիչ II.2-ի շրջանակում կանխիկ դրամաշնորհներ և խորհրդատվական ծառայություններ	1,100,000	-	-	-	-	-
Ընդամենը	**13,900,000**	**13,900,000**	**21,200,000**	**19,282,365**	**4,929,124**	**24,211,489**

(*) Ֆինանսավորման համաձայնագրի փոփոխություն 21 ապրիլի 2020թ. (հոդվածների վերաբաշխում):
(**) Վարկի գծով SDR-ով արտահայտված բյուջեի ԱՄՆ դոլարով համարժեքը հաշվարկվում է՝ ԱՄՆ դոլարով ստացած կուտակային ֆոնդերին ավելացնելով հաշվետու ամսաթվի դրությամբ SDR-ով դեռևս չբաշխված ֆոնդի ԱՄՆ դոլարով համարժեքը (եթե առկա է): 31.12.2019թ. դրությամբ SDR/USD փոխարժեքը սահմանված է 1 SDR =1.38283 USD (31.12.2018 -1.3941):

1.4. Ծրագրի իրականացում

Ծրագիրը իրականացվում է ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից (ԱՍՀՆ):

Մինչև 2020թ. հունվարի 1-ը Ծրագրի ֆիդուցիար մասը իրականացվում էր ՀՀ Ֆինանսների նախարարության Ծրագրերի Իրականացման Վարչության (ԾԻՎ) կողմից: 2020թ. հունվարի 1-ից, համաձայն Ֆինանսավորման համաձայնագրի 2019թ. դեկտեմբերի 26-ի լրացման, Ծրագրի ֆիդուցիար մասի լիազորությունները փոխանցվել են ԱՍՀՆ-ին:

ԱՍՀՆ-ի հասցեն է՝ ք. Երևան 10, Կառավարական տուն թիվ 3, Հայաստանի Հանրապետություն:

3. ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՌՀԱՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (SOE և SUMMARY SHEET)

31.12.2019թ.-ին ավարտվող տարի

Դիմումի համարը	Դիմումի հաստատման ամսաթիվը	Ծախսային հոդված I. Ծրագրի շրջանակում ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, վերապատրաստում և լրացուցիչ գործառնական ծախսեր՝ բացառությամբ Ծրագրի բաղադրիչ II.2-ի միջոցառումների
		ԱՄՆ դոլար
13DA	06.02.2019	489,854.01
14DA	01.04.2019	287,982.46
16DA	28.08.2019	331,768.67
17DA	16.12.2019	462,343.18
Ընդամենը		1,571,948.32

4. Նպատակային հաշվի հաշվետվություն

Հաշվարկային հաշիվ	900000900382
Բանկ	Կենտրոնական գանձապետարան,
Հասցե	Մելիք-Ադամյան 1, Երևան, Հայաստանի Հանրապետություն, 0010
Արժույթը	ԱՄՆ դոլար

	ՁՄԸ No. 5398-AM վարկ 31.12.2019 ավարտվող տարի
1. Սկզբնական մնացորդ	510,145.99
2. Ավելացում. սկզբնական անհամապատասխանություն	-
3. ՄԶԸ ֆոնդի կանխավճար/համալրում	2,071,948.32
4. Նվազեցում. Նպատակային հաշվից մարում ՄԶԸ -ին	-
5. Նպատակային հաշվին համալրված գումարի ներկա մնացորդը	2,582,094.31
6. Նպատակային հաշվի վերջնական մնացորդ	1,387,951.53
7. Ավելացում. վճարված ընդունելի ծախսերի գումար	1,194,142.78
8. Նվազեցում. ստացված տոկոսներ (եթե կրեդիտագրվել են նպատակային հաշիվ)	-
9. Ընդամենը հաշվառված համալրում	2,582,094.31
10. Տարբերություն (5)-(9)	-

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԾՐԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄ

2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ
(ԱՄՆ դոլար)

Ծախսային հոդված	Դիմում	Ծրագիր	ՀԲ	Տարբերություն
Կանխավճար	16DA	500,000.00	500,000.00	-
		500,000.00	500,000.00	
1. Ծրագրի շրջանակում ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, վերապատրաստում և լրացուցիչ գործառնական ծախսեր՝ բացառությամբ Ծրագրի բաղադրիչ II.2-ի միջոցառումների	13DA	489,854.01	489,854.01	-
	14DA	287,982.46	287,982.46	-
	15DA	անվավեր -	-	
	16DA	331,768.67	331,768.67	-
	17A	անվավեր -	-	
	17DA	462,343.18	462,343.18	
		1,571,948.32	1,571,948.32	
Ընդամենը		2,071,948.32	2,071,948.32	

Ղեկավարության Կողմից Աուդիտորին Ուղղված Հավաստագիր

10 հունիսի 2020

«Ռի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ
Դ. Անհաղթի 23/6, 5-րդ հարկ
Երևան, Հայաստան

Հավաստումների սույն գրությունը ներկայացվում է 2014թ. մայիսի 23-ին կնքված ՄՁԸ 5398-ԱՄ Վարկային Համաձայնագրով (Վարկային Համաձայնագիր) ֆինանսավորվող և Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից իրականացվող "Սոցիալական պաշտպանության վարչարարության II Ծրագրի" ("Ծրագիր") 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտի առնչությամբ:

Մենք գիտակցում ենք մեր պատասխանատվությունը, որ.

- Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ՀՀՀՀՄՍ դրամային հիմունքի համաձայն,
- Հաշվապահական հաշիվները և ֆինանսական փաստաթղթերը ճշգրիտ են և ամբողջական, և ներկայացնում են իրական փաստերը Ծրագրի նպատակներին և ազգային օրենսդրությանը համապատասխան:
- ներքին վերահսկողության ձևավորում և իրականացում խարդախությունը կանխելու և հայտնաբերելու նպատակով:
- Ծրագրի վերաբերյալ ստացված կամ մեր կողմից ֆինանսավորման հետ կապված տեղեկատվության ամբողջականությունը և համապատասխանությունը
- ցանկացած տեղեկատվության և բացահատումների առկայություն, բանավոր կամ գրավոր հաստատմամբ, որոնք կարող են պահանջվել աուդիտորի կողմից աուդիտի իրականացման ընթացքում:

Մեր գիտելիքներն ու համոզվածությունը հիմք ընդունելով՝ հավաստում ենք, որ.

- Մենք Ձեզ տրամադրել ենք բոլոր հաշվապահական գրքերը և օժանդակ փաստաթղթերը:
- Չկան էական գործարքներ, որոնք պատշաճ կերպով գրանցված չեն եղել Ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած հաշվապահական հաշվառման հաշիվներում:
- Ներքին հսկողության համակարգը հուսալի է. Ֆինանսական և այլ փաստաթղթերի հասատումը և վերահսկողությունը, պարտականությունների տարանջատումը, կատարվում է պատշաճ կերպով,
- Ծրագրի միջոցներն օգտագործվել են համաձայն ստանձնված բյուջեի,
- Ֆինանսական գործարքներն իրականացվում են ծրագրի նպատակներին և Վարկային համաձայնագրի պայմաններին համապատասխան:
- Ֆինանսական միջոցները օգտագործվել են խնայողական և արդյունավետ եղանակով:
- Չի եղել որևէ խախտում ղեկավար կազմի կամ աշխատակիցների ներգրավման մեջ, որոնք նշանակալի դեր ունեն հաշվապահական հաշվառման և ներքին հսկողության համակարգերում, և որը կարող է էական ազդեցություն ունենալ ֆինանսական հաշվետվությունների վրա:
- Ֆինանսական հաշվետվությունները զերծ են էական սխալներից և բացթողումներից.
- Չեն գրանցվել վերահսկող կազմակերպությունների կողմից հակաօրինական փաստերի կամ խախտումների բացահայտում, որոնք էական ազդեցություն կունենային ֆինանսական հաշվետվությունների վրա:
- Ֆինանսական հաշվետվությունների ամսաթվից հետո տեղի ունեցած իրադարձությունները բացահայտված են:
- Չկան փաստացի կամ սպասվելիք հայցեր:
- Մեր կողմից չեն բացահայտվել խարդախության փաստացի կամ կասկածելի դեպքեր, որոնք ազդում են Ծրագրի վրա և կապված են հետևյալ անձանց հետ.
  ա. Ղեկավարություն,
  բ. Ներքին հսկողության գործում նշանակալի դեր ունեցող աշխատակիցներ, կամ
  գ. այլ անձիներ, եթե խարդախության դեպքը կարող է էական ազդեցություն ունենալ ֆինանսական հաշվետվությունների վրա:

Սաեփան Մաչյան
ՀՀ ԱՍՀՆ գլխավոր քարտուղարի
պարտականությունները կատարող

Ռիմմա Բաբոյան
Ֆինանսական կառավարման մասնագետ